Ըստ վրաց Տարեգրքի, Աշոտ սպանուեց Քրոնիկոնի 46, այսինքն՝ 826 թուին: Մասակը եւս մեռաւ նոյն տարին:

Աշոտ Մասակը ունէր չորս որդի եւ երկու դուստր: Աւագ որդիները՝ Դաւիթ եւ Բագրատ հաստատուել էին Տարօն, իսկ Սահակ եւ Մուշեղ Մոկաց աշխարհում: Մուշեղ Մոկաց իշխեցող, որոշ չէ թէ Մասակերի՞ որդին է թէ Սահակի: Մասակերի կրտսեր որդին Սմբատ ժառանգեց կենտրոնական իշխանութիւնը:

Հին աշխարհին եւս ծանօթ էին քաղաքական ամուսնութիւնները:

Մասակը իր մէկ դուստրը տուաւ կնութեան Աղձնիքի յայտնի մուսուլման իշխանին՝ Մուսէին, Զորահայի որդուն: Այս ծայրագաւառի իշխանութիւնը դժուար հարուածելի էր եւ մշտական վտանգ հարեւան Տարօնի համար: Աշոտ յոյս ունէր խնամիական կապերով սանձելու չէզոքացնելու հնարաւոր սպառնալիքը: Վարդանը յիշատակում է, որ Մասակերի որդիք՝ «Դաւիթ եւ Սահակ եւ Մուշեղ եւ Բագարատ առեալ զմայրն Իւրեանց չոգան ի Նըփըրկերտ առ Խալաֆն ամիրայ, սիրով ընկալեալք ի նմանէ»:

Նփրկերտ, ինչպէս Բաղէշ, մտնում էին Մուսէի իշխանութեան մէջ: Անշուշտ, ընտանեկան այց էր մօր կողմից իր դստեր որդիների ուղեկցութեամբ:

Աշոտի միւս դուստրը, Հռիփսիմէն, ամուսնացաւ Արծրունեաց իշխանին հետ, որի անունը պատմութիւնը չէ պահել, բայց յայտնի են նրանց որդիները՝ Աշոտ, Գուրգէն եւ Գրիգոր:

Ութերորդ դարու քաղաքական շարժման մասնակից էին Արծրունիք, որպէս երրորդ գործօն ոյժ առընթեր Բագրատունի եւ Մամիկոնեան տների:

Նոյն դարու սկզբում Գրիգոր եւ Կորիւն Արծրունիք, Աշոտ Կոյրի օրից Վահան Արծրունու որդիք՝ Սահակ, Համազասպ, Գագիկ եւ վերջինիս զաւակները՝ Համազասպ, Սահակ եւ Մեհրուժան — նշանաւոր դէմքեր էին հրապարակի վրայ, մարտնչող արաբական բռնութեան դէմ, թեւակից Մամիկոնեան կտրիճների: 785 թուին, յայտնութեան օրը, մարտիրոսութեան պսակն ստացան Համազասպ եւ Սահակ: Արաբ բռնակալի վրէժխնդրութիւնն էր, որ ճայթեց յետին եւ դաւաղ ժամին ընդդէմ խռովարար եղբայրների: Մեհրուժանը ուրացաւ հայրենի հաւատը, «զդենոյր զկերպարան դայլոյ» եւ փրկեց իր կեանքը: Գուցէ սիրելի եղբայրների մահն էր այն «մեծ աղէտը», որի համար Միհրուժան սպանեց Մուշեղ Մամիկոնեանի երկու որդիներին, որ ապաստանել էին Վասպուրական, սպանեց, կարծելով որ վրէժ է լուծում նրանց հօրից, որպէս աղէտի պատճառից: Նահատակուած իշխանների վարքում յիշւում է, որ Մեհրուժան անպատիժ չմնաց. Դաւիթ Մամիկոնեան խողխողեց նրան: Դիւրին բան չէր խթել Մամիկոնեաններին:

Ահա այս Արծրունի իշխանների զաւակներից մէկն էր, որ վերապրեցաւ Աշոտ Մասակերին, առնելով նրա դուստրը:

Մամիկոնեանների անկումից յետոյ միակ աշարծակ տունը, որ կարող էր մրցել Բագրատունիների հետ բարի թէ չար նախանձից, Արծրունիք էին: Հեռատեսութիւն էր Մասակերի կողմից՝ ամուսնական կապերով պահել կասկածելի ախոյեանին քաղաքական համերաշխութեան շրջանում:

Բագրատունի իշխանուհին Հռիփսիմէ վերածնեց Արծրունու տոհմը, պարգեւելով երեք քաջարի զաւակ: Նրանցից Աշոտը եղաւ Արծրունիների համար այն ինչ որ իր պապը՝ Բագրատունիների:

Աշոտ Մասակեր բոլորեց իր կեանքի ընթացքը պատմական խոշոր դործիչի պատասխանատու դերում, եւ բոլորեց փայլով եւ փառքով: Արաբական բռնութեան ծանրագին օրերն էին, երբ Աշոտ հրապարակ իջաւ: Երկիրը աւեր, կաղմալոյծ մարմնապէս եւ հոգեպէս, լաւագոյն ոյժերը քամուած, մնացորդները քաշուած ասպարէզից: Հաղարացիք սպառսպուռ տիրել բռնել էին Հայաստանեայց, հեծեծում է ժամանակակից պատմագիրը, աշխարհիս մեծամեծները նուազել, իսկ «մնացեալք զօղեալք դաղարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա»:

Այս դրութիւնից հանեց երկիրը Աշոտ, հանեց իր բազուկներով եւ ծանրախոհ դլխով: Իր օգնականները իր մերձաւորներն էին՝ իր